II

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՀՄԵՐԻ ՑԱՆԿԸ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Երբ ծանոթանում ես «Հայոց պատմության» մեջ նախարարական տոհմերի ծագման և հետագա պատմության լուսաբանմանը, ապա դժվար է հրաժարվել այն մտքից, որ Խորենացին, ինչպես իր ժամանակագրական համակարգը կերտելիս, այստեղ ևս, նախարարության պատմությամբ զբաղվելիս, մեծ նախապատրաստական աշխատանք է տարել, հանգեցնելով իրեն հայտնի տեղեկությունները մի որոշակի համակարգի, որը և զետեղել է իր «Պատմության» մեջ։

Խորենացու առաջին մտահոգությունը այս ուղղությամբ պետք է լիներ այն նախարարությունների ցանկի կազմումը, որոնք պիտի հանդես գային իր «Պատմության» էջերում (բոլոր նախարարությունները չեն, որ հիշատակվում են այնտեղ)։ Ծանոթանանք այդ ցանկին, հանելով այն «Հայոց պատմության» տեքստից նախարարական տոհմերի նույն հերթականությամբ, ինչպես որ նրանցից յուրաքանչյուրն առաջին անգամ կամ եզակի, հիշատակվում է Խորենացու երկում։

1. Բագրատունի
Գնթունի
Խոռխոռունի
Վարաժնունի
5. Գարեղեան
Արեղեան
Արծրունի
Գնունի
Սպանդունի
10. Հաւունի
Զիւնական
Մարդպետական
Մուրացեան
Կաղմեան
15. Սիւնի (Սիսական)
Առանի
Ուտէացի
Գարդմանացի
Ծավդէացի
20. Գարգարացի
Աշոցեան
Տաշրաց
Գուգարացի
Որդունի
25. Անգեղեայ
Ծոփաց
Ապահունի
Մանաւազեան
Բզնունական
30. Սլկունի
Մանդակունի
Վահունի
Առաւենեան
Զարեհաւանեան
35. Ադենիքի
Մոկացի
Կորդուացի
Անձևացի, Անձաւացի
Ակէացի
40. Ռշտունի
Գողթնեցի
Վանանդացի, Վանանդեցի
Դիմաքսեան
Տրունի
45. Ամատունի
Առաւեղեան
Ռոփսեան
Մամիկոնեան
Կամսարական
50. Աշխադարեան

Այսպիսի մի ցանկ կազմել է դեռևս Ն. Ադոնցը՝ վաղ միջնադարի հայ նախարարության պատմության մանրակրկիտ և խորաթափանց հետազոտողը, որի անունը սույն հոդվածում անընդհատ կհիշատակվի[1]։ *Ադոնցի ցանկը*

[1] Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, с. 261–262.

նույնպես կազմված է ըստ «Հայոց պատմության» մեջ նախարարությունների հիշատակման հաջորդականության, բայց տարբերվում է մեր կազմածից իր ընդգրկմամբ։ Նրա անվանացանկը պարունակում է 48 տոհմանուն, թեև, ըստ ցանկին ուղեկցող թվերի, պիտի լինի 49։ Ըստ այդ թվերի 35-րդի (Աղձնիքի) և 40-ոդի (Ռշտունի) միջև պիտի լիներ չորս տոհմանուն՝ Մոկացի, Կորդուաոի, Անձևացի, Ակէացի, սակայն թվարկված են միայն առաջին երեքը, իսկ Ակէացին չկա, գուցե՝ թյուրիմացաբար։ Համենայն դեպս բերում ենք Մովսես Խորենացու համապատասխան հիշատակությունը Ակէացու մասին, որը կասկածի տեղ չի թողնում։ Խոսքը Վաղարշակ թագավորի մասին է։ «Իսկ զՄոկացին ի նոյն գաւառէ գտեալ այր, որ ունէր ընդ իւրեաւ սրիկայս բազումս՝ նախարարութիւն հաստատէ։ Նոյնպես և զԿորդուացիս, և զԱնձևացիս, և զԱկէացիս ի նոյն գաւառաց» (II, 8)։

Սակայն, առդեն գիտակցաբար, Ադոնցը իր կազմած ցանկի մեջ չի ընդգրկել Առանի (Աղուանքի) նախարարությունը, մինչդեռ Խորենացու մոտ կարդում ենք. «Յետ սորա մեծ և անուանի և բազմաբիւր զարևելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի և յամենայն գործ մտաւորութեան և հանճարոյ առաջին զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր։ Բայց զայս գիտեա, զի զցեղս զայս մեծ և անուանի մոռացումն եղև մեզ յառաջնումն մատենին յիշատակել, զգունդն որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և գլեռնակողմն նորին դաշտի, ի զետոյն Երասխայ մինչև ցամուրն որ ասի Հնարակերտ. և աշխարհն յանուն քաղցրութեան բարուց նորա անուանեցաւ Աղուանք, զի աղու ձայնէին զնա։ Եվ ի սորա ծննդոց այս Առան անուանի և քաջ կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր ի Պարթևէն Վաղարշակայ։ Ի սոցա զաւկաց ասեն սերեալ զազգն Ուտէացւոց և Գարդմանացւոց և Ծաւդեացւոց և Գարգարացւոց իշխանութիւնսն» (II, 8)։

Այստեղից պարզվում է, որ «աշխարհի» Աղուանք անունը ծագում է, ըստ Խորենացու, Սիսակի «աղու» (քաղցր, հաճելի) մականունից, և որ այդ «մեծ և անվանի և բազմաբյուր կողմում (Վաղարշակը) կարղել է կողմնակալություն», կողմնակալ նշանակելով «անվանի և բոլոր մտավորության և հանճարի գործերում առաջին այր՝ Առանին»։ Իսկ Առանը ներկայացուցիչն էր Սիսակից ծագած «մեծ և անվանի ցեղի», որը Սիսակից ժառանգել էր «Աղվանքի դաշտը և դաշտի լեռնակողմը, Երասխ գետից մինչև Հնարակերտ կոչվող ամրոցը», և որը Խորենացին, իր իսկ ասելով, մոռացել էր հիշատակել իր առաջին գրքում։ Առանից էլ իրենց հերթին ծագել են Ուտէացիների, Գարդմանացիների, Ծաւդեացիների և Գարգարացիների նախարարությունները։

Բոլորովին անհասկանալի է, թե ի՞նչն է դրդել Ն. Ադոնցին ոուրս թողնել Առանի տոհմը Խորենացու «Հայոց պատմության» մեջ հանդես եկող նախարարական տոհմերի ցանկից։ (Նշենք, որ Խորենացու մոտ Աղվանք տեղանվան Առան տարբերակը ներկայանում է որպես անձնանուն)։ Եթե դա «նախարարությունն» (կամ «անհապետությունն») բառի բացակայությունն է տվյալ դեպքում, ապա նույն գլխում (II, 8) ունենք նաև մի շարք այլ նման դեպքեր, որոնք վերաբերում են Անդեղեայ, Սլկունի, Աղձնիքի, Աշոցքի և այլ նախարարական տների կարգմանը։

Ի դեպ, Առանեանք որպես նախարարական տուն հիշատակվում են Սեբեոսի մոտ[2]։

Թվարկված 50 նախարարական տոհմերից բացի, «Հայոց պատմության» մեջ մեկական անգամ հիշատակված են նաև երկու իշխաններ՝ Հաշտեանքի իշխան Գաղը (Դատը, III, 4) և Անծիթի իշխան Սաղամութը (III, 15)։ Երկու իշխաններն էլ հանդիպում են Բուզանդի մոտ (Գագը՝ Դատ ձևով)։ Մենք, հետևելով Ադոնցին, այս երկու իշխաններին չենք մտցնում Խորենացու՝ նախարարական տոհմերի համակարգի մեջ, որովհետև նրանց հիշատակությունը

2 Պատմութիւն Սեբէոսի, աշխատությամբ Գ. Վ. Աբգարյանի. Երևան, 1979, էջ 165։

«Հայոց պատմության» մեջ անցողիկ բնույթ է կրում և Խորենացին նրանց տոհմերի մասին ծագումնաբանական տեղեկություններ չի տալիս, մի բան, որ նա անում է անխտիր բոլոր տոհմերի նկատմամբ։

Արդ, որտեղի՞ց է քաղված Խորենացու այս 50 տոհմանուն պարունակող ցանկը։ Նախ, ինչ-որ չափով, նախամեսրոպյան շրջանից Խորենաոուն հասած գրավոր նյութերից (Ողյումպ քուրմ, «Հիսումն պիտոյից», Մար Աբաս գուցե և ինչ-որ այլ նյութեր), այնուհետև, շատ մեծ չափով, IV և V դդ. հայոց պատմությունը լուսաբանող հայ մատենագրությունից և սրա կողքին՝ իր առօրյա կյանքից, շփումներից և հարցուփորձից նախարարական տների և նրանց պատմության վերաբերյալ։ Մենք դեռ կհամոզվենք, թե ինչքան մեծ է եղել այս երկրորդ խմբի տեղեկությունների նշանակությունը Խորենացու համար։ Սակայն նրա ցանկը սերտորեն առնչվում է նաև հանրահայտ Գահնամակի հետ[3]։

Գահնամակը մեկ թերթի վրա և մեկ օրինակով մեզ հասած նախարարական տոհմանունների մի թվարկում է, բաղկացած 70 անուններից, որին մի փոքր առաջաբան է կցված. ծանոթանանք նախ առաջաբանին[4], իսկ հետագայում կմոտենանք նաև նրան հաջորդող ցանկին։

«<Իմ Սա>հակայ խնդիր արարեալ ի դրան արքունի յԱրտաշէսի Թագաւորի զոր ի Տիզպոնն խաւսեցեալ եթէ ես ղռամականն զնամա զոր Արտաշրի ի դիւանին տէսի ի քաղոց ամսոյ ժէ։ Եւ Վռամայ արքայից արքայի եւ բարերարի եւ գիր արարի ես Սահակ կաթողիկոս թէ որպէս Ձեր բարերարութիւնդ հրաման տացէ հայոց աղատաց եւ տանուտերանց որպէս յառաջ առ հայոց ազգին, նոյնպէս եւ ի ձերում դիւանի շահհամա<ր>ին առնել, որ յայսմ հետէ հայոց ագատաց եւ տանուտէրանց գահ ի յայտ լինէր։ Նոյնպէս և Ներսէհ հրամանաւ արքայից արքայի և ես <Սա>հակ հայոց կաթողիկոս կնքեցաք զգահնեմակին և եղաք մատանի զարքայից արքայի և զմերս. եւ է այսպէս արդար և ճշմարիտ» (հաջորդում է ցանկը)։

Թարգմանություն. «<Ես, Սա>հակ, փնտրեցի Արտաշես թագավորի արքունի դրանը այն, ինչի մասին զեկուցեցի Տիզբոնում, թե «ես տեսա Արտաշրի ռամական նաման դիվանում քաղոց ամսի 17-ին»։ Եւ արքայից արքա և բարերար Վռամին ես, Սահակ կաթողիկոս գիր գրեցի թե «թող Ձերդ բարերարությունը հրաման տա՝ հայոց աղատներին ու տանուտերներին, ինչպես առաջ (ընդունված էր) հայոց ազգի մեջ, նույնպես և ձեր դիվանում շահհամա<ր>ի անել, որպեսզի այսուհետև հայոց ազատների և տանուտերերի դահը հայտնի լինի»։ Նույնպես և Ներսեհը՝ արքայից արքայի հրամանով, և ես <Սա>հակ հայոց կաթողիկոս, կնքեցինք գահնամակը և դրինք արքայից արքայի և մեր մատանիները և այսպէս արդար ու ճշմարիտ է» (հաջորդում է ցանկը)։

Գահնամակը մեզ հասել է ոչ թե բնագրի, այլ արտագրության ձևով (և որոշ աղավաղումներով)։ Այս հանգամանքը, դժբախտաբար, զրկում է հետազոտողին այն արտաքին տեսքի՝ այսինքն ձևավորման, հնագրության, նյութի, մի խոսքով՝ վավերագրաբանության (դիպլոմատիկայի) տեսակետից ուսումնասիրելու և թվագրելու հնարավորությունից և թույլ է տալիս քննության առարկա դարձնել սոսկ նրա բովանդակությունը։

Բովանդակությունը հետևյալն է. Սահակ կաթողիկոսը միտք է հղանում վերահաստատել հայ նախարարների գահնամակը պարսից թագավորի ձեռքով։ Նա որոնում ու գտնում է գահնամակը վերջին հայ Արշակունի՝ Արտաշես

---

3 Գահնամակն առաջին անգամ հրատարակվել է Մ. Էմինի կողմից՝ История Армении Моисея Хоренского. М. 1858, с. 358: Լուսանկարը տե՛ս Ղ. Ալիշան. Այրարատ. Վենետիկ, 1890, էջ 431—432։ Գահնամակի մանրամասն և համակողմանի ուսումնասիրությունը տվել է Ն. Ադոնը։ Н. Адонц. Указ. соч., с. 249 и сл.

4 Ընթերցումն ըստ Ն. Ադոնցի։

թագավորի դիվանում և ներկայացնելով այն Վռամ արքային՝ ստանում ցանկալի հաստատումը։

Առաջաբանում հիշատակված են հետևյալ հինգ (կամ չորս) անձնավորությունները. ա) Սահակ Պարթև, հայոց կաթողիկոս, որը գործել է IV դարի 90-ական թթ. սկսած մինչև 439 թ., բ) Արտաշես, հայոց թագավոր, որն իշխել է 422—428 թթ., գ) Արտաշիր II, պարսից թագավոր, որ իշխել է 379—384 թթ., դ) Վռամ V, պարսից թագավոր, որն իշխել է 420—439 թթ. և ե) Ներսեհ, պարսից թագավորի խոշոր պաշտոնյա, գուցե հետագայում հայտնի Միհրներսեհը՝ իր գործունեության սկզբնական շրջանում։

Այսպիսով, ըստ Գահնամակի իսկ տվյալների, այն ներկայացվել ու հաստատվել է 428 և 439 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում։ Մենք բացառում ենք Արտաշեսի թագավորության տարիները (422—428 թթ.), հենվելով, նախ, գահնամակի այն ցուցման վրա, ուր ասված է «...որպէս յառաջառ հայոց ազգին, նոյնպէս և ի ձերում դիւանի...», ուր «յառաջ»-ը պետք է նշանակի Արշակունիների հայկական պետության գոյության շրջանը։

Պարզաբանում է պահանջում «Արտաշիր» անվանաձևը, որն օգտագործված է գահնամակում «Արտաշէս»-ին զուգահեռ։ Տարակույս կա, թե արդյո՞ք երկու անվանաձևերի տակ թաքնված է նույն անձնավորությունը, թե՞ խոսքը մի դեպքում հայոց Արտաշեսի (որը կոչվել է նաև Արտաշիր), մյուս դեպքում՝ Շապուհ II-ի որդի, պարսից թագավոր Արտաշիր II-ի մասին է։ Կարծում ենք, որ ավելի ընդունելի է երկրորդ ենթադրությունը[5], այսինքն՝ հայոց արքա Արտաշէսի դիվանում գտնվել է պարսից արքա Արտաշիրի հաստատած գահնամակը։ Սակայն, եթե խոսքը այնուամենայնիվ Արտաշեսի մասին է, ապա ինչո՞վ կարելի էր բացատրել նույն տեքստում երկու անվանաձևերի առկայությունը։ Նախ նշենք, որ «Արտաշէս» ձևը արտահայտում է իրանական այդ անվան հին, պահլավական, այդ ժամանակ արդեն որպես հայկական ընկալվող ձևը, իսկ մյուսը՝ «Արտաշիր»-ը, Սասանյան շրջանում Պարսկաստանում կիրառվող ձևը[6]։ Փորձենք տալ երկու անվանաձևերի զուգահեռ օգտագործման հնարավոր բացատրությունը, հենվելով թղթում հանդիպող նմանօրինակ մի այլ դեպքի վրա։ Այստեղ, Արտաշիր անվան հետ կապակցված, հանդես է գալիս «ռամական նամա» տերմինը, որի ստուգաբանության շուրջ վեճեր են եղել[7]։ Թվում է, թե ինչպիսի ստուգաբանություն էլ տրվեր այդ տերմինին, թղթի ամբողջ կոնտեքստը թույլ է տալիս պնդելու, որ «ռամական նամա»-ն և մի քանի տող հետո հիշատակված «գահնամակը» («գահնեմակին»), նույն բանն են նշանակում, մեկը՝ պարսիկների մոտ, մյուսը՝ հայերի։ Իրականում այդ բառը նույնպես իրանական ծագում ունի, և պարունակում է նույն «նամա(կ)» բառը, սակայն նրա ձևը, հատկապես, վերջին կ-ի առկայությունը, վկայում է այն մասին, որ նա փոխառված է ոչ թե սասանյան շրջանում, ինչպես «ռամական նամա»-ն, այլ պահլավերենից, այսինքն՝ ավելի վաղ շրջանում[8], իսկ V դարում, Հայաստանում ընկալվում էր արդեն որպես հայկական բառ։

---

5 Հավանարար, այդպես է հասկացել Գահնամակի առաջաբանը նաև Մովսես Խորենացին (III, 51, 65)։

6 Արտաշես—Արտաշիր անվանաձևերի նշված հարաբերակցությունը հայոց արքա Արտաշեսի կապակցությամբ պարզ արտահայտվել է Խորենացու մոտ (III, 58)։ Անվանաձևերի ծագման մասին տե՛ս Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. հ. Ա, Երևան, 1942, Արտաշէս և Արտաշիր։

7 Ն. Էմինն ուղղում է՝ «վռամական». Գր. Խալաթյանը համաձայն չէ, և ստուգաբանում է պարսկերեն «ռամա»-ն՝ «երամ, ամբոխ» բառի օգնությամբ։ Սկզբունքորեն նրա հետ համաձայն է Ն. Ադոնցը, որը, սակայն, առաջ է քաշում պահլավական «ռամակ» ձևը, ընդունելով նրա՝ որպես ռազմական միավորի (=վաշտ) նշանակությունը։

8 Տե՛ս Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. 1-ին մաս, Երևան, 1940, էջ 250, թիվ 256 և էջ 274, թիվ 866։

Այս զույգը հիշեցնում է Արտաշես—Արտաշիր զույգը և հուշում «Արտաշիր» անվանաձևի օգտագործման հնարավոր պատճառները։ Այն օգտագործված է «ոամական նամա»-ի հետ միասին, միևնույն նախադասության մեջ, որը ասել է Սահակը Տիզբոնում։ Քերականապես այդ նախադասությունն ուղիղ խոսք է, այսինքն՝ ակնկալություն ունի բառացիորեն վերարտադրելու ասածը։ Բացառված չէ, որ Սահակն այստեղ բերում է այն տերմինը և այն անվանաձևը, որոնք նա կիրառել է Տիզբոնում Գահնամակի կապակցությամբ բացատրություններ տալիս։

Վերադառնալով Գահնամակի թվագրման հարցին, շարունակենք, ասելով, որ նախարարական տոհմերի բուն ցանկը ևս չի հակասում առաջաբանից բխող թվագրմանը։ Ադոնցը նշում է, որ այդ ցանկը, չնչին բացառությամբ, ընդգրկում է միայն մարզպանական Հայաստանի տարածքի նախարարությունները (որը և բնական է), ինչպես նաև զերծ է այնպիսի տոհմերի հիշատակությունից, որոնք V դարում արդեն գոյություն չունեին[9]։

Ն. Ադոնցն ընդարձակ և մանրամասն հիմնավորում է տալիս այսօրինակ վավերագրերի գոյության անհրաժեշտությանը և՛ Արշակունիների, և՛ մարզպանության շրջանում, ինչպես նաև բնութագրում է նրանց դերը, որպես ավատական (ֆեոդալական) տիրապետությանը իրավական ձևավորում տվող միջոցներից մեկը։ Նա գտնում է նաև, որ Գահնամակն արտահայտում է V դարի նախարարական կարգային վիճակը[10]։

Այսուհանդերձ, մեզ հասած տվյալ Գահնամակը նա համարում է ոչ թե վավերագիր կամ, նույնիսկ, նրա պատճեն, այլ գրական կոթող, կազմված VII դարի առաջին կեսում՝ V դարի նյութերի հիման վրա։

Գահնամակի գրական կոթող լինելու իր կարծիքն Ադոնցը հիմնավորում է նրանով, որ՝ նախարարական կրկնվող տոհմանունների («Սիւնեաց երկրորդն», «Արծրունեաց երկրորդն», «Այլ Անձաւացի» և այլն), ինչպես և 6 այլ, մեծ մասամբ աղավաղված, տոհմանունների հիշատակումն այլ աղբյուրներում չկա։ «Այս անուններն են այն կասկածելի տարրերը, որոնք վարկաբեկում են մեր հուշարձանը» գրում է Ադոնցը[11]։ Մեզ համար անհասկանալի է, թե ինչու մի վավերագրում (կամ նրա պատճենում) չեն կարող լինել անուններ, որոնք չկան մեզ հայտնի մատենագրության մեջ։ Իսկ աղավաղումները պատճենների համար սովորական բան են։ Առավել ևս, վավերագրի համար պատշաճ է հիշատակել այնպիսի պաշտոնական մանրամասներ, որոնք տեղ չեն գտնում նարրատիվ (պատմողական) հուշարձաններում, ինչպես, օրինակ, տվյալ դեպքում նախարարական տների ճյուղավորումների մասին տեղեկությունները։ Ինչ վերաբերում է VII դարով թվագրման խնդրին, ապա Ն. Ադոնցը Գահնամակի բովանդակության մեջ որևէ հենակետ չի գտնում։ Նրա հենակետը Գահնամակից դուրս է։

Մովսես Կաղանկատվացու մոտ (II, Ա), գրում է նա, մի զրույց է պահպանվել, որտեղ պատմվում է Շապուհ II-ի արքունիքում տեղի ունեցած ճաշկերույթի մասին։ Շապուհը հայ նախարարներին սեղանի շուրջն ըստ արժանվույն տեղավորելու նպատակով պահանջում է նրանցից մի որևէ վավերագիր, ուր նշված լիներ նրանց հերթականությունը։ Նրան ներկայացնում են ոչ այլ ինչ, քան Ագաթանգեղոսի գիրքը, ուր նշված են 17 նախարարներ՝ որոշակի կարգով։ Այս զրույցը, ըստ Ադոնցի, ծագել է VII դարի սկզբից ոչ

---

9 IV դարի սկզբում ընդհատված տոհմեր՝ Մանավազյան, Որդունի, Բզնունի, մարզպանական Հայաստանից դուրս իշխող տոհմեր՝ Անդեղտուն, Աղձնիքի, Գուդարքի և այլն։ Բացառություն են կազմում Կասպէից և Մոփաց տոհմերը, որոնց տիրույթները դուրս էին մարզպանական Հայաստանից։ Տե՛ս Н. Адонц. Указ. соч., с. 262.

10 Նույն տեղում, էջ 291։

11 Նույն տեղում, էջ 257, 291։ Այսուհանդերձ, այս վերջին էջում, տողատակում Ադոնցը ինքն է նշում աղբյուրներում նախարարական տների ճյուղավորումների հիշատակման մի քանի դեպք։

վաղ, և հենց Ագաթանգեղոսի հիշյալ ցուցակը այն ձևով, ինչպես նա ներկայանում է զրույցի մեջ, VI դարի վերջերից ավելի վաղ չի ձևավորվել։ Արդ, շարունակում է Ադոնցը, եթե մի զրույցում, որ ստեղծվել է VII դարի սկզբներին, մեր Գահնամակի փոխարեն հանդես է գալիս Ագաթանգեղոսի ցուցակը, որը Ադոնցի պնդմամբ, ամենևին Գահնամակ չէ, ապա Գահնամակն այն ժամանակ դեռևս գոյություն չի ունեցել և ավելի ուշ է ստեղծվել, հետևաբար և գրական, այլ ո՞չ վավերական, բնույթ ունի[12]։

Նման փաստարկումը մի շարք խոցելի կետեր ունի։ Նախ և առաջ, նրանից տրամաբանորեն հետևում է, որ ոչ միայն այս Գահնամակը, այլև ընդհանրապես ո՞չ մի Գահնամակ գոյություն չի ունեցել մինչև VII դարի սկզբները, իսկ դա հակառակ է գահնամակների անհրաժեշտության Ադոնցի իսկ տված հիմնավորմանը՝ մարզպանական շրջանի հենց սկզբից (չխոսելով արդեն Արշակունյաց շրջանի մասին)։ Այնուհետև, ապացուցված էլ չէ, թե վերոհիշյալ զրույցը իսկապես VII դարից առաջ ծագած լինել չէր կարող։ Բայց եթե համարենք էլ թե այն հաստատապես VII դարին է պատկանում, դարձյալ չի կարելի պնդել թե Գահնամակը, իր գոյության դեպքում, անպայման պետք է հիշատակվեր այն զրույցում։ Այսպիսով, մեր կարծիքով, որևէ անհրաժեշտություն չկա Գահնամակը, ավելի ճիշտ՝ նրա վավերական նախատիպը, տեղաշարժելու V դարի 30-ական թթ., կամ այն համարելու գրական կոթող։ Ավելի շուտ այն վավերագիր Գահնամակի արտազրություններից մեկն է՝ որոշ աղավաղումներով, որոնք ի հայտ են գալիս թե՛ առաջաբանում և թե՛ բուն ցանկի մեջ։

Զբաժանելով Ն. Ադոնցի կարծիքը Գահնամակի թվագրման և բնույթի հարցերում, միանգամայն համամիտ ենք նրա համոզմանը, որ այն սառայել է Խորենացուն որպես աղբյուր[13]։ Դրա համար Ն. Ադոնցին որպես ապացույց են ծառայել երկու տիպի փաստեր։ Առաջին տիպի փաստերը ի հայտ են գալիս «Հայոց պատմության» պարունակած նախարարական տոհմերի և Գահնամակի կազմի համեմատությունից, որից երևում է, մի կողմից, որ Խորենացու ցանկի շուրջ երեք քառորդը առկա է Գահնամակում, իսկ մնացած քառորդը այնպիսի նախարարություններ են, որոնք չէին էլ կարող այստեղ լինել, քանի որ Գահնամակը ընդգրկում է միայն մարզպանական Հայաստանի տարածքը և V դարում գոյություն ունեցած նախարարությունները, իսկ մյուս կողմից, որ Գահնամակում առկա նախարարությունների մի որոշակի մասի բացակայությունը Խորենացու մոտ նույնպես միանգամայն օրինաչափական է (այս հարցին մենք մանրամասն կանդրադառնանք ստորև)։ Երկրորդ տիպի փաստերը՝ Գահնամակի և մասնավորապես նրա առաջաբանի ազդեցության դրսևորումներն են Խորենացու տեքստում։ Այսպես, Խորենացին բերում է պարսից թագավոր Վռամի անունից Սահակ կաթողիկոսին արծաթ առաջարկողին վերջինիս տված պատասխանը՝ «Արծաթ նորա նմա լիցի. բայց դու հաւանեցուսդես զնա՝ տալ ինձ զերկուսս զայս միայն. զզահ նախարարացն Հայոց, որպես կարգեալ յԱրտաշրէ վարեցան մինչև ցայժմ՝ նորին օրինակաւ հրամայեսցէ և առ յապայ... Եւ միւս...» և այլն։ Այնուհետև տեղեկանում ենք Վռամի պատասխանին՝ «Այնմ լսող եղեալ Վռամայ՝ հրամայէ զամենայնն կատարել» (III, 65)։

Այս բոլորը բավականաչափ համոզիչ են և հազիվ թե կասկածի տեղ թողնվի Գահնամակին Խորենացու ծանոթ լինելու հարցում։

Գահնամակի բուն տեքստին (ցանկին) մենք կանդրադառնանք ստորև, իսկ այժմ մի այլ խնդիր։ Խորենացին օգտագործել է Գահնամակում բերված նախարարական տոհմերի անունների մոտավորապես կեսը միայն (70-ից՝ 36-ը), անտեսելով մնացածը։ Հարց է ծագում, թե ինչո՞վ է նա առաջնորդվել։ Ադոնցը փորձում է պատասխանել նաև այս հարցին։

---

12 Նույն տեղում, էջ 291։

13 Նույն տեղում, էջ 271 և այլուր։

Գահնամակում, ինչպես ասվեց, հիշատակված են նախարարական 8 խոշոր տոհմերի 11 հյուղավորումներ, օրինակ, «Սիւնեաց երկրորդն», «Արծրունեաց երկրորդն» և նույնիսկ «երրորդն», «այլ Դիմաքսեանն» և այլն։ Այս լույսը Խորենացին մի կողմ է դրել։ Սնում են, սակայն, երկու տասնյակից ավելի՝ թվով 23 այլ անտեսված նախարարական տոհմեր։ Սրանց վտարումը բացատրելու համար Ն. Ադոնցը առաջ է քաշում մի այլ թուղթ, որը և, Գահնամակի օրինակով, անվանում է Զորանամակ («Воинская грамота»)[14]։

Զորանամակը նույնպես նախարարական տոհմերի ցանկ է։ Ի տարբերություն Գահնամակի, այն բաժանված է չորս մասի կամ «դռան» (Արևելեան դուռն, Արևմտեան դուռն, Հիւսիսային դուռն, Հարաւային դուռն), և յուրաքանչյուր տոհմի անվան դիմաց դրված է, թե քանի զինվոր (հեծյալ) է մատակարարում տվյալ նախարարությունը։ Ն. Ադոնցը մանրամասնորեն հիմնավորում է նման փաստաթղթերի գոյության անհրաժեշտությունը ես, և այն էլ ոչ միայն մարզպանական, ինչպես Գահնամակը, այլ նաև արաբական տիրապետության սկզբնական ժամանակաշրջանում։ Դառնալով, սակայն, կոնկրետ մեզ հասած Զորանամակին, նա համարում է այն գրական բնույթի հուշարձան, կազմված VII կամ հաջորդ դարերում և այս անդամ, մեր կարծիքով, միանգամայն իրավացի է։

Իր այս կարծիքը Ն. Ադոնցը հիմնում է Զորանամակի ներքին տվյալների, նրա ներքին հակասությունների վրա։ Նա նշում է չորս խմբերի կազմերի շինծու բնույթը, որն արտահայտվում է մի կողմից խմբերի մեջ ընդգրկված տոհմանունների թվերի արհեստական համաչափության (21-21-22-22), մյուս կողմից՝ նրանց բովանդակության մեջ. թեև խմբերը կոչվում են «Արեվելեան դուռն» և այլն, սակայն նրանց մեջ նախարարները միավորված են աշխարհագրական սկզբունքի խախտումներով։ Այսպես, Բագրատունիներն ու Բասենացին հայտնվում են արևմտյան խմբում, Կասպէից իշխանը՝ հյուսիսային խմբում, Գողթան իշխանը՝ հարավային խմբում։ Կարելի է բերել և ուրիշ օրինակներ։ Բացի այդ, ցանկում կան այնպիսի տոհմեր (Որդունիներ, Մանավազյաններ), որոնք վերացել են դեռևս IV դարի սկզբում և այլն։

Բացի այդ, զինված ուժերի չորս խմբի բաժանման և Զորանամակի կազմի մեջ Ն. Ադոնցը ժամանակագրական հակասություն (անաքրոնիզմ) է տեսնում, քանի որ նման բաժանումը նա համարում է ուշ ժամանակի արգասիք (Սասանյանների վերջին շրջան)[15], մինչդեռ Զորանամակի աշխարհագրական ընդգրկումը թվարկված նախարարությունների կազմի, ընդգրկման տեսակետից համապատասխանում է հին, հայ Արշակունիների ծաղկման ժամանակաշրջանին։

Բերում ենք Զորանամակի ցանկը՝ իր թվական տվյալներով՝ ըստ Ն. Ադոնցի. աջ կողմից ավելացնում ենք տվյալներ, թե Զորանամակում պարունակված որ նախարարություններն են հիշատակված Գահնամակում (նշվում է Գ տառով), Մովսես Խորենացու մոտ (Խ տառով), Ղազար Փարպեցու մոտ (Ղ տառով), VII դարի Աշխարհացույցում (Ա տառով) և Սեբեոսի մոտ (Ս տառով)։

Արեւմտեան դուռն				Արեւելեան դուռն			
1. Անձեւ տուն	վն	—	Խ	1. Սիւնի	ա քն	Գ	Խ
Բդեշխն Աղձնեաց	ա	—	Խ	Ամասկոնի	մ	Գ	Խ
Բզնունական	վ	—	Խ	Աւածացին	մ	—	—
Մանաւազեան	ռ	—	Խ	Վարձաւունի	մ	Գ	—
5. Բագուրատունի				5. Տամրարացի	ճ	Գ	—
Խորխոռունի				Մազազացի			

14 Նույն տեղում, էջ 251—252։

15 Ստորև կտեսնենք, սակայն, որ այն կա արդեն Մովսես Խորենացու մոտ։ Սակայն Խորենացուն VII—VIII դարերով թվագրող Ադոնցի համար այս փաստը արժեք չունի։

Ծոփացի	ո	Գ	Խ	Յողկեպան	ճ	—	—
Վահունի	ո	Գ	Խ	Գրդճունի	ծ	—	—
Ապահունի	ո	Գ	Խ	Վառնունի	ծ	—	—
10. Գնունի	չ	Գ	Խ	10. Բաքան	ծ	—	Ա
Բասենացի	ո	Գ	—	Կճրունին	ծ	—	Ա
Պալունի	յ	Գ	—	Գուկանն	ծ	—	Ա
Ընծաքին	տ	Գ	—	Պատսպարունին	ծ	—	Ա
Մանդակունի	յ	Գ	Խ	Գազրիկան	ծ	Գ	—
15. Սաղկունի	յ	Գ	Խ	15. Վիժանունի	ծ	Գ	—
Վարաժնունի	յ	Գ	Խ	Ջանղաղան	ծ	—	Վ
Այծենական	ճ	—	—	Սողացի	ծ	—	Ա
Առուեննեան	յ	Գ	Խ	Աքածեցի	ծ	Գ	—
Վարժնունեան	ճ	—	Ա	Ասճոնեան	ծ	—	—
Սպան<ո>ունի	յ	Գ	Խ	Կինան	ծ	—	—
21. Ռափսեան	ճ	Գ	Խ	21. Տագրեան	ծ	Գ	—

Հիւսիսային դուռն				Հարաւային դուռն			
1. Բղեշխն Գուգարաց	տչ	—	Խ	1. Կաղմէացի	ավմ	—	Խ
Կամսարական	ո	Գ	Խ	Կորդուացի	ո	—	Խ
Կասպեցի	վ	Գ	—	Արծրունի	ո	Գ	Խ
Ուտէացի	ո	—	Խ	Ռըշտունի	ո	Գ	Խ
5. Ծաւդէացի	ո	—	Խ	5. Մոկացի	ո	Գ	Խ
Տայեցի	ո	Գ	—	Գողթնեցի	չ	Գ	Խ
Մամիկոնեանն	ո	Գ	Խ	Անձեւացի	չ	Գ	Խ
Վանանդացին	ո	Գ	Խ	Հարուժեան	ա	Գ	—
Գարդմանեցին	ո	Գ	Խ	Տրպատունի	ճ	—	Ա
10. Որդունի	չ	—	Խ	10. Մեհնունի	ճ	Գ	—
Առուեղեանքն	չ	Գ	Խ	Ակէացի	յ	Գ	Խ
Աչոցեան	չ	Գ	Խ	Զարէհուանեայ	յ	Գ	Խ
Գիմաքսեան	յ	Գ	Խ	Եր<ու>անթունի	յ	Գ	—
Գնթունի	յ	Գ	Խ	Համատունեան	ճ	—	—
15. Բոխայեցի	յ	Գ	—	15. Արտաշեսեան	յ	Գ	—
Գարեղեան	յ	Գ	Խ	Սաղրատունի	ճ	Գ	—
Արեղեան	յ	Գ	Խ	Արրահամեան	ճ	—	Ա
Հաւնունի	յ	Գ	Խ	Տրունի	յ	Գ	Խ
Սահառունի	յ	Գ	—	Բուժունի	մ	Գ	—
20. Զենականան	յ	Գ	Խ	20. Քաջբերունի	ճ	Գ	—
Ախաղարեան	ճ	Գ	Խ	Բողունի	ճ	—	Ա
22. Վարազարտիկեան	ճ	Գ	—	Մուրացան	յ	Գ	Խ

Նախ, անդրադառնանք Գահնամակի և Զորանամակի ցանկերի փոխհարաբերությանը։ Այստեղ, ինչպես և գանում է Ն. Ադոնցը, ամեն ինչ պարզ է։ Զորանամակի հեղինակը ծանոթ է եղել Գահնամակին և հիմնովին օգտագործել է այն։ Գահնամակի 70 կամ ավելի ճիշտ՝ 60 տոհմանուններից (11 տոհմանուն, ինչպես նշվեց, արդեն հիշատակված 8 տոհմանունների կրկնություններ են, բայց դրանցից մեկը՝ Բուխա Դիմաքսեանը, կա Զորանամակում Բոխայեցի ձևով)։ Զորանամակում չկան միայն երեքը՝ Նախճերին, Քաղաքապետն արքունի և Յուլն։ Մնացած 57-ը առկա են։ Կան մի քանի աղավաղված անուններ, բայց դրանք չեն խոչընդոտում արված եզրակացությանը, օրինակ, Գահնամակում Ամատունի, Համբուժեան, Վարասպակեան, Զորանամակում՝ Ամասկոնի, Հարուժեան, Վարազարտիկեան և մի քանի ուրիշը։

Նույնանման պատկեր են ցուցադրում Խորենացու և Զորանամակի ցանկերը։ Խորենացու 50 տոհմանուններից Զորանամակում առկա են 46-ը և

չկան միայն չորսը՝ Մարդպետականը, Առանին, Գարգարացին, Տաշրացը։ Ավելին, Զորանամակի չորս «դրունք» և նրանց զորավարները նույնպես արձագանքում են Խորենացու մոտ հանդես եկող պատկերին։ Հայոց զորքը ըստ ծագերի չորս մասի բաժանելու գաղափարը հանդես է գալիս նաև Խորենացու մոտ։ Այսպես, Արտաշես թագավորը չորս մասի բաժանված հայոց զորքը հանձնարարում է. արևելյանը իր Արտավազդ որդուն, արևմտյանը՝ Տիրան որդուն, հյուսիսայինը՝ Զարեհ որդուն և հարավայինը՝ Սմբատ զորավարին (III, 54)։ Սակայն նրանից շատ առաջ էլ, ըստ Խորենացու, այդպիսի բաժանում եղել է և դեռևս Արամ նահապետը հանձնարարել է արևելյան մասը Սիսակյաններին (Սյունի), հարավայինը՝ Կադմյաններին (1, 14, II, 8), հյուսիսայինը՝ Գուգարաց բդեշխին, արևմտյանը՝ Անդեղյաններին (II, 8)։ Այս ևս համապատասխանում է Զորանամակի չորս զորավարներին. Արևմտեան դուռն՝ Անդեղ տուն, Հյուսիսային դուռն, Գուգարաց բդեշխ, Արևելեան դուռն՝ Սյունի և Հարավայինը՝ Կադմյաններ։

Սակայն այս բոլորով հանդերձ, այսինքն, բացի նաև Գահնամակի և Խորենացու ցանկերում առկա անուններից, Զորանամակում կա ևս 19 անուն, առանց որոնց չէր կարող լրացվել սխեմայի քանակական մասը՝ 21+ +21+22+22=86 թիվը։ Պակասող միավորները (որոնք կուտակված են հատկապես «Արևելեան դուռն» հատվածում) լրացնելիս հեղինակը դիմել է նախ և առաջ VII դարի Աշխարհացույցին։ Այստեղից նա առել է 9 անուն. Վարժնունեան (հավանաբար, երեք Վարաժնունիներից Տուրուբերանի համապատասխան գավառը), Մազազացի (Մաղազ գավառից), Բաքան, Կճրունի (ճիշտը՝ Կրճունի), Գուկան, Սոդացի (Սոդք գավառ), Տրպատունի, Բոդունի (ճիշտը՝ Բոգունի)։ Եվս 2 անուն կա Փարպեցու (Ջանդաղան)[16] և Սեբեոսի (Աբրահամեան)[17] մոտ։

Այս բոլորից հետո դարձյալ մնացել է 8 դատարկ տեղ, որոնք էլ հեղինակը լրացրել է հայտնի չէ, ինչ աղբյուրից։ Այդ անուններն, ըստ երևույթին, անճանաչելիորեն աղավաղված են։ Դրանք են. Այծենական, Աւածացին, Յողկեպան, Գըղճունի, Վառնունի, Ասճշնեան, Կինան, Համաստունեան։

Ուշ շրջանի այս արհեստական և խայտաբղետ գրվածքը, որը հավակնություն ունի արտացոլելու Արշակունիների ժամանակաշրջանը, Ն. Ադոնցը համարում է Խորենացու աղբյուր։ Ձևական տեսակետից սա կարելի է պատկերացնել, քանի որ վերը նշված նմանությունները տեսականորեն կարող են լինել թե՛ Զորանամակի և թե՛ Խորենացու փոխառության արդյունք։ Սակայն Ն. Ադոնցի ընտրության մեջ անշուշտ իր դերն է խաղում Խորենացուն VII կամ հաջորդ դարի հեղինակ համարելու հանգամանքը։ Պետք է ասել, որ ընդհանուր եզրակացություն հանելիս նա որոշ վերապահություն է անում, բայց կոնկրետ վերլուծությանը դիմելիս վերացնում է այդ վերապահությունը։

Այսպես, նա գրում է. «Խորենացու խոսքերը «կարգ զինուորութեանց»-ի մասին ցույց են տալիս, որ նրան ծանոթ է եղել մեր թղթի (Զորանամակի— Գ. Ս.) նման ինչ-որ մի բան, բայց թե այն ինչ հարաբերության մեջ է Զորանամակի հետ՝ հայտնի չէ։ Գուցե գոյություն է ունեցել նախարարական այրուձիի ցուցակ, և այդ ցուցակը հետագայում վերամշակվել է մեզ հասած այդ թղթի տեսքով։ Խորենացուն, համենայն դեպս, ծանոթ է եղել մի զինվորական ցուցակ իր այս կամ մեկ ուրիշ տեսքով»[18]։ Այսինքն, տվյալ Զորանամակը չէ անպայման, որ օգտագործել է Խորենացին, այլ գուցե որևէ այլ գրվածք կամ վավերագիր, որն արտացոլվել է նաև Զորանամակի մեջ։ Սրա հետ կարելի է լիովին համաձայնվել։ Սակայն, իրականում, դառնալով հարցի կոնկրետ քննարկմանը, Ադոնցն անվերապահորեն գործի է դնում հենց մեր ձեռքի տակ եղած Զորանամակի թվական տվյալները, նշելով՝ «Ուշադիր

16 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1904, էջ 61։

17 Պատմութիւն Սեբեոսի, էջ 129։

18 Н. Адонц. Указ. соч., с. 296.

դիտարկումները հայտնաբերում են Խորենացու ծանոթությունը ոչ միայն Գահնամակի, այլև Զորանամակի հետ»[19]։

Որպես ապացույց Ն. Ադոնցը բերում է մի հիբրիդային աղյուսակ, որը ներկայացնում է Գահնամակի ցանկը, օժտված Զորանամակի պարունակած յուրաքանչյուր նախարարի ունեցած զինվորների թվաքանակներով։

Վերարտադրում ենք այդ աղյուսակը, մեր կողմից աջ մասում ավելացնելով տեղեկություններ Գահնամակում թվարկված նախարարությունների՝ V դարի այլ աղբյուրներում հիշատակման վերաբերյալ։ Սրա նպատակն է ստեղծել մի յուրատեսակ, ժամանակակից բառով ասած, ռեյթինգի (արժորոշման) պատկեր, պարզելու համար, թե Խորենացու ապրած դարում նախարարական ո՞ր տոհմերն են առավել հաճախ հիշատակվել մատենագրության մեջ, ուրեմն և առօրյա շփումների ժամանակ և, հետևաբար, որոնք են, որ առավել նշանակալից դեր են կատարել երկրի կյանքում։ Հարկավ, չի կարելի երաշխավորել, որ ստացվող պատկերը ճիշտ կլինի նաև իր մանրամասներում, բայց ընդհանուր պատկերացում այն մասին, թե ինչ տեղեկատվություն է ունեցել Խորենացին որպես ժամանակակից, անշուշտ, կստացվի։

Բերվող տվյալները նշված են հեղինակների անունների սկզբնատառերով՝ Կ—Կորյուն, Ա—Ադաթանգեղոս, Փ—Փավստոս Բուզանդ, Ղ—Ղազար Փարպեցի, Ե—Եղիշե։ Բացի այդ, ընդգծել ենք Խորենացու ցանկում բացակայող տոհմանունները՝ շեղատառով։

Գահնամակի ցանկը բերում ենք Ն. Ադոնցի արած ճշգրտմամբ, ըստ որի «Առաջին իշխան Հայոց եւ մաղխազն» Մաղխազունին (Խոխոռունին) ցանկից դուրս վիճակից (դրված է ա. կետից առաջ) տեղափոխվում է 4-րդ (դ.) տեղը, որով Մամիկոնյանները այդտեղից անցնում են 5-րդ (ե.) տեղը, և համարակալումը շարունակվում է մեկ միավոր տարբերությամբ մինչև 24-րդ (իդ.) տեղը, որպիսի թիվը Գահնամակում բաց է թողնված և 23-ին (իգ.) հաջորդում է 25-ը (իե.)։ Ադոնցի հիմնավորված ճշգրտմամբ այս բացթողումը ուղղվում-լրացվում է և ցանկը շարունակվում է Գահնամակում առկա թվերով մինչև 70 (հ.)։

ա. Սիւնեաց տէր	19400	Կ	Ա	Բ	Ղ	Ե
բ. Ասպետն	1000	—	Ա	Բ	Ղ	Ե
գ. Արծրունեաց տէր	1000	—	Ա	Բ	Ղ	Ե
դ. Առաջին իշխան Հայոց Մաղխազն	1000	—	Ա	Բ	Ղ	Ե
ե. Մամիկոնէից տէր	1000	Կ	Ա	Բ	Ղ	Ե
զ. Շահապն Տոփաց տէր	1000	—	Ա	Բ	—	—
է. Մոկաց տէր	1000	—	Ա	—	Ղ	Ե
ը. Ռշտունեաց տէր	1000	—	Ա	Բ	Ղ	Ե
թ. Վահունեաց տէր	1000	—	—	—	Ղ	Ե
ժ. Կոսպէից տէր	3000	—	—	—	—	—
ժա. Անձաւացեաց տէր	—	—	—	Բ	Ղ	Ե
ժբ. Ապահունեաց տէր	1000	—	—	Բ	Ղ	Ե
ժգ. Կամսարականն	600	—	—	Բ	Ղ	Ե
ժդ. Այլ Ապահունի	—	—	—	—	—	—
ժե. Վանանդացին	1000	—	—	Բ	Ղ	Ե
ժզ. Ամատունի տէր	—	Կ	—	Բ	Ղ	Ե
ժէ. Գողթան տէր	500	Կ	—	Բ	—	—
ժը. Գնունեաց տէր	500	—	—	Բ	Ղ	Ե
ժթ. Այլ Անձաւացի	500	—	—	—	—	—
ի. Տայոց	600	—	—	—	—	—
իա. Բասենոյ դատաւորն	600	—	—	—	—	—
իբ. Գնթունեաց տէր	300	—	—	Բ	Ղ	Ե

19 Նույն տեղում, էջ 263 և այլուր։

իգ. Վարաժնունին	200	—	—	—	—	—
իդ. Գարդմանայ տէր	1000	Կ	—	Թ	—	—
իե. Սահառունին	300	—	—	Թ	Ղ	Ե
իզ. Գարեղէնից տէր	300	—	—	—	Ղ	Ե
իէ. Արեղէնից տէր	300	—	—	—	Ղ	—
իը. Սիւնեաց երկրորդն	—	—	—	—	—	—
իթ. Արծրունեաց երկրորդն	—	—	—	—	—	—
լ. Արծրունեաց երրորդն	—	—	—	—	—	—
լա. Մամիկոնէից երկրորդն	—	—	—	—	—	—
լբ. Ռոփսեանն	100	—	—	—	Ղ	Ե
լգ. Աշոցեանն (Գաշոցեանն)	500	—	Ա	—	Ղ	—
լդ. Դիմաքսեանն	300	—	—	Թ	Ղ	Ե
լե. Բախիա Դիմաքսեանն	300	—	—	—	—	—
լզ. Այգ Արեզեանն	—	—	—	—	—	—
լէ. Այդ Դիմաքսեանն	—	—	—	—	—	—
լը. Պալունին	300	—	—	—	—	—
լթ. Առաւեղեանն	500	—	—	—	Ղ	Ե
խ. Աշահմարեանն	100	—	—	—	—	—
խա. Համբուժեանն	100	—	—	—	—	—
խբ. Վարասպակեանն	100	—	—	—	—	—
խգ. Ջիւնականն	300	—	—	—	Ղ	—
խդ. Ակէացին	300	—	—	—	—	Ե
խե. Զարեհաւանեանն	300	—	Ա	—	—	—
խզ. Ընծայեցին	4000	—	—	—	Ղ	Ե
խէ. Մանդակունին	300	—	—	—	Ղ	Ե
խը. Սղկունին	300	—	—	—	—	Ե
խթ. Տայզրեանն	50	—	—	—	—	—
ծ. Երվանդունին	300	—	—	—	Ղ	—
ծա. Սպանդունին	300	—	—	—	—	—
ծբ. Առաւենեանն	300	—	—	—	Ղ	Ե
ծգ. Տրունին	300	—	—	—	—	—
ծդ. Մամբերացին	100	—	—	—	—	—
ծե. Հաւնունին	300	—	—	—	—	—
ծզ. Բժնունին	200	—	—	—	—	—
ծէ. Քաջբերունին	100	—	—	—	Ղ	Ե
ծը. Մեհնունին	100	—	—	—	—	—
ծթ. Նախճերին	—	—	—	—	—	—
կ. Քաղաքապետն արքունի	—	—	—	—	—	—
կա. Որսապետն արքունի	300	—	—	—	—	—
կբ. Արտաշեսեանն	300	—	—	—	—	—
կգ. Վանանդացին երկրորդ	—	—	—	—	—	—
կդ. Ցուլն	—	—	—	—	—	—
կե. Վիժանու<նի>	50	—	—	—	—	—
կզ. Աքաձու	50	—	—	—	—	—
կէ. Շիրակա Դիմաքսեան	—	—	—	—	—	—
կը. Գազրիկեանն	50	—	—	—	—	—
կթ. Մարացեան տ<էր>	300	—	—	—	—	—
հ. Վազրասպու<նին>	100	—	—	—	—	—

Արդ, Գահնամակի 70 տոհմանուններից Խորենացու ցանկում առկա են միայն 36-ը։ Բացակայում են 34-ը։ Սրանցից 11-ը, ինչպես երիցս ասվեց, 8 երեսելի նախարարական տոհմերի ճյուղավորումներն են ներկայացնում, ուստի և բնականաբար չկան Խորենացու մոտ։ Բայց հարց է ծագում, թե ինչու են բացակայում նրա մոտ մնացած 23-ը։ Այս հարցին պատասխանելու համար Ն. Ադոնցը գործի է դնում Զորանամակի թվերը, որոնք կցված են Գահ-

նամակում տեղ գտած նախարարական տոհմերին, և գտնում, որ «Գահնամակի հիմքում ընկած է ռազմական ուժը՝ նախարարությունները տեղավորված էին նվազող գծով, համաձայն այրուձիի (զորքի) այն քանակության, որն ուներ նրանցից յուրաքանչյուրը»[20]։

Տեսականորեն սրա հետ կարելի է համաձայնվել և նույնիսկ չի կարելի չհամաձայնվել, քանի որ բնական է, որ նախարարությունները այսպիսի մի տեղ, ինչպիսին է Գահնամակը, պիտի դասավորվեին ըստ իրենց խաղացած դերի երկրի քաղաքական, տնտեսական կյանքում, և առաջին հերթին, իհարկե, ըստ իրենց ռազմական հզորության։

Սակայն, այնուհետև, կոնկրետ և վստահորեն, Ն. Ադոնցը դիմում է մեզ հասած Զորանամակի թվական տվյալներին, որպես Խորենացու անմիջական աղբյուրի, և նրանց հիման վրա փորձում բացատրել Խորենացու մոտ նշված 23 նախարարությունների բացակայության պատճառները։ «Խորենացու մոտ Գահնամակի համեմատությամբ պակասող նախարարությունները,—գրում է նա,—այն նախարարություններն են, որոնք կամ խախտում են դահերի շարքի հերթականությունը և կամ ունեն երեք հարյուրից պակաս ձիավոր (զինվոր)»[21]։

Գահնամակում գահերի թվական գործակիցների աստիճանական նվազման ընդհանուր զաղափարը ընդունելի է, բայց Ն. Ադոնցի առաջարկած այս երկու բանաձևերի կոնկրետ դրսևորումը չափազանց շատ խոչընդոտների է հանդիպում ի դեմս դրանք խախտող բացառությունների։

Առաջին բանաձևի կապակցությամբ այդպես էլ չի պարզվում, նախ և առաջ, թե ինչո՞ւ, ի՞նչ պատճառներով զորքերի թվաքանակների աստիճանական նվազման պատկերը խախտող նախարարությունները պիտի այդ հատկանիշով ընդհանրապես հանվեին Խորենացու ցանկից։ Այստեղ Խորենացուն ոչ մի հիմք չի վերագրվում, նույնիսկ՝ տրամաբանական։

Բայց ծանոթանանք Ն. Ադոնցի բերած կոնկրետ օրինակներին։ Դրանք են. Կասպէից տէր՝ 3000 զինվորով, Տայոց՝ 600 զինվորով, Բասենոյ դատաւորն՝ 600 զինվորով և Ընծայեցին՝ 4000 զինվորով։ Թե ինչպես են դրանք խախտում նվազման աստիճանականությունը՝ երևում է աղյուսակից։ Բայց այնտեղ կա ևս չորս նախարարություն, որոնք իրենց զորքերի թվաքանակով նախորդ չորսի նման խախտում են նվազման աստիճանականությունը և, այսուհանդերձ, չեն վտարվել Մովսես Խորենացու ցանկից։ Դրանք են. Վանանդացին իր 1000, Գարդմանայ տէրը իր 1000, Աշոցեանը իր 500 և Առաւեղեանը իր 500 զինվորներով (տե՛ս աղյուսակը)։ Ուրեմն՝ չորս օրինաչափականի դեմ չորս բացառություն։ Նման օրինաչափությունը դժվար է ընդունել։

Այժմ նայենք այդ ութ նախարարությունների ռեյթինգին (արժորոշմանը) աղյուսակի աջ կողմում։ Եթե Խորենացու ցանկում բացակայող առաջին քառյակը ունի 0, 0, 0, 2 միավոր, ապա երկրորդ, այնտեղ առկա քառյակն ունի 3, 2, 2, 2 միավոր։ Սա դրդում է մեզ Խորենացու կատարած ընտրության հիմքերի մեջ առաջնությունը տալ արժորոշմանը (ռեյթինգին), այսինքն ընդունել, որ իր ապրած զարում նա այդ խնդրում հետևել է երկրի կյանքում նախարարությունների խաղացած դերին և ոչ թե զուտ մեխանիկորեն զործողություններ է կատարել թվերի հետ, ինչպես տվյալ դեպքում նրան այդ վերագրում է Ադոնցը։

Գալով երկրորդ բանաձևին, ըստ որի Խորենացու ցուցակից վտարվել են 300 զինվորից պակաս ունեցող նախարարությունները, ապա այստեղ էլ կա

20 Նույն տեղում, էջ 264։

21 Նույն տեղում։

թվով վեց[22] բացառություն։ Այսպես, Ռոփսեանը և Աշխադարեանն իրենց 100-ական զինվորներով մնացել են Խորենացու ցուցակի մեջ, մինչդեռ Սահառունին, Պալունին, Արտաշեանն ու Ծրուանդունին իրենց 300-ական զինվորներով՝ վտարվել այնտեղից։

Ուրեմն այս բանաձևի դրսևորումը ևս այնքան սահուն չէ, ինչպիսին այն ներկայացնում է Ադոնցը։

Այժմ քիչ ավելի խորանանք արժորոշման (ռեյթինգի) տվյալների մեջ։ Խորենացու նախարարական ցանկում ներկայացված՝ Գահնամակի 36 տոհմանուններից (որոնք մեր վերջին աղյուսակում առանց ընդգծման են ներկայացված) 30-ը, ըստ աղյուսակի աջ կողմում մեր ցուցադրած տվյալների, մեկից մինչև հինգ անգամ ներկայանում են V դարի աղբյուրներում, 1 անդամ՝ 5-ը, 2 անդամ՝ 9-ը, 3 անգամ՝ 9-ը, 4 անգամ՝ 5-ը և 5 անդամ՝ 2-ը։ Այդ աղբյուրներում բացակայում են 6-ը։

Գահնամակի մնացած 23 տոհմանունների (11 կրկնվողները խաղից դուրս են) արժորոշման պատկերը հետևյալն է. 1 անդամ հիշատակվում է Ծրուանթունին, 2 անգամ՝ Պալունին, Ընծայեցին, Քաջբերունին, 3 անգամ՝ Սահառունին։ Թե ինչու սրանք չկան Խորենացու մոտ դժվար է ասել, մանավանդ՝ Պալունին, որ ազդեցիկ նախարարական տոհմ էր։ Գուցե Պատմահոր քաղաքական համակրանքից ու անհամակրանքից ելնելով, որը կվկայեր նրա քաղաքական ակտիվ դիրքորոշման մասին, և համընթաց կլիներ տոհմերի արժորոշմանը նրա, մեր կարծիքով, նվիռած ուշադրությանը։

Ավելի կարևոր է, որ նշված 23-ից 18-ը ընդհանրապես բացակայում են V դարի աղբյուրներում և դրանով պատշաճ հիմք ստեղծում բացատրելու համար ամբողջ այդ խմբի բացակայությունը։ Դրանք այն նախարարություններն են, որոնց ծանոթ լինելով Գահնամակից, Խորենացին այնուհանդերձ չի ներգրավել իր նախարարական ցանկի մեջ և նույնիսկ հիմնավորել է իր այդ քայլը, ինչպես նկատել է Ադոնցը, հետևյալ կերպ. «Եւ այլ որ ինչ կրտսերագոյն ազգք... հաստատէ այս Տիգրան (Վերջին). որք միանգամ անազգիք էին ի վաշտս և անձամբ երևելիք... որք... ի զարմից Հայկազանց ոմանք և յեկուց։ Զոր ոչ անուամբ պատմեսցուք...» (II, 64)։

Ադոնցը «անազգիք էին ի վաշտս» արտահայտությունը ծառայեցնում է Գահնամակի՝ Խորենացու կողմից զտման իր առաջ քաշած բանաձևի հիմնավորմանը (300 զինվորից պակաս), բայց այն, սույն բանաձևի գեթ մասնակի վարկաբեկման պայմաններում, հավասարապես կարող է ամրապնդել մեր անցկացրած արժորոշման արդյունքները։

Այսպես, ուրեմն, եթե Խորենացու մոտ առկա 36 տոհմանուններից միայն վեցն են բացակայում V դարի մեզ հայտնի աղբյուրներում, այսինքն՝ 16,5 տոկոսը, ապա նրա մոտ բացակայող 23 տոհմանուններից այդ աղբյուրներում չկան 18-ը, այսինքն, 78 տոկոսը։ Այսպիսի հարաբերությունը, թվում է, բավարար հիմք է եզրակացնելու, որ Խորենացին, ընտրություն անելիս, հիրավի ելել է իր ժամանակի հասարակական կարծիքից, ուժերի փոխհարաբերությունից։

Սրա օգտին է խոսում նաև վերը վերլուծված մասնավոր այն դեպքը, երբ զորքերի թվական տվյալների նվազման սահունության խախտմամբ է բացատրվում չորս նախարարությունների վտարումը Խորենացու ցանկից, մինչդեռ մենք ցուցադրեցինք, որ այդ 4-ից 3-ը իսպառ չեն հիշատակվում նաև V դարի այլ աղբյուրներում, իհարկե, ոչ այն պատճառով, որ համապատասխան հեղինակները ևս կիրառել են տոհմանունների զտման այդ չափանիշը։

Անդրադառնալով կրկին անդամ այն 6 նախարարություններին, որոնք, առկա լինելով Խորենացու ցանկում, այսուհանդերձ բացակայում են V դարի

---

22 Գուցե՝ յոթ, եթե հաշվի առնենք Բուխա Դիմաքսեանին, իր 300 զինվորով, որն այդ 300-ով, ըստ Ադոնցի, պիտի մնար Խորենացու ցանկում, իսկ որպես Դիմաքսեանների ճյուղավորում պիտի բացակայեր։

այլ աղբյուրներում, թվում է թե ի վիճակի ենք բացատրել այն հիմքը, որը Խորենացու աչքում փոխարինել է արժորոշմանը։ Խոսքը Աշխադարեան, Սպանդունի, Տրունի, Հաւ(ն)ունի, Որսապետն արքունի (Վարաժնունի) և Մուրացեան նախարարությունների մասին է։ Ինչո՞վ են սրանք արժանացել պատմահոր ուշադրությանը։ Պատասխանելու համար պիտի թեթևակի ոտք կոխենք մի բնագավառ, որը մտադիր ենք մանրամասնորեն արծարծել մեր հաջորդ հոդվածներից մեկում։ Դա Խորենացու մոտ նախարարական տոհմանունների ժողովրդական ստուգաբանության բնագավառն է։

Պետք է հիշեցնել, որ տոհմանունները Խորենացու աչքում ոչ թե սոսկ հատուկ անուններ են եղել, այլ պատմական տեղեկատվության կրողներ, պատմական աղբյուրներ։ Այդ իմաստով նրա մոտ կան ավելի երևելիները և պակաս երևելիները, և դա կապված է ոչ թե համապատասխան տոհմերի իրական երևելիության աստիճանից, այլ զուտ տոհմանվան ընձեռած ստուգաբանական հնարավորությունների աստիճանից։ Այդ իմաստով, ասենք, Որշտունի հզոր տան տոհմանունը Խորենացուն ոչինչ չի տվել, իսկ, ասենք, Ձիւնական շարքային տան տոհմանունը պարգևել է մի փոքր պատմական տեղեկատվություն. տոհմի ներկայացուցիչները, ըստ Խորենացու, կարգված են եղել արքունի «ամառանոցաց պահակս և ձիւնակիրս», որից և վաստակել են իրենց տոհմանունը (II, 7)։

Այս առումով վերոհիշյալ մեր վեց տոհմանուններին անդրադառնալիս տեսնում ենք, որ նրանցից յուրաքանչյուրը Խորենացուն որոշակի՝ մեծ կամ փոքր տեղեկատվական զանգված է մատուցել։ «Ասեմ և Սպանդունիսդ ի վերա զենարանաց և զՀաւունիսդ՝ բազէակիրս և բազէակալս, յաղագս ի մայրիս բնակելոյ» (II, 7)։

Տրունի տոհմանունը, ըստ Խորենացու, ստացել են Տուր անունով մի անձնավորության 15 որդիները Արտաշես արքայից «ոչ վասն արութեան ինչ գործոց, այլ միայն վասն քսութեան հօր նոցա, զոր առնէր ի տանեն արքայի (Երուանդայ—Գ. Ս.), առ Սմբատ, քանզի ընտանի էր Երուանդայ...» (II, 47)։ «Տուր» անունը՝ «տամ» բայից Խորենացին առնչել է նրա կրողի «քսութեան» («մատնիչութեան») հետ[28]։

Գահնամակի «Որսապետն արքունի» տոհմանունը Խորենացին նույնացրել է Վարաժնունի տոհմանվան հետ, ասելով «Առ Արտաշիսիւ թոռամբ Վաղարշակայ ոմն Վարաժ անուն պատանի լեալ, աջող յորս եղջերուայ և այծեմանց և վարազուց, դիպաձգութեամբ նետից կորովի. զսա ի վերայ որսոց արքունականաց կարգէ... Եւ ի սմանէ ասեն լինել զտունն Վարաժնունի» (I, 12, II, 11)։

Այս նույնացման հիմքը «վարաժ» անվան և «վարազ» բառի նմանությունը պիտի լինի։

Շատ ավելի ծավալուն է Մուրացեան տոհմանվան մատուցած տեղեկատվությունը։ Գահնամակում նրան համապատասխանում է Մարացեան տէր ձևը, որը և, ըստ երևույթին դրդել է Խորենացուն շարադրել հետևյալ դրվագները, որոնք սկսվում են Վաղարշակ արքայի օրերից։ «Բայց ետ կարդելոյ

28 Տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, II, Վենետիկ, 1937, «տալ. որպէս մատնել յայլս կամ դանձն»։

զտուն թագաւորին,—գրում է Խորենացին,—երկրորդ թագաւորութեանն լիներ ի զաւակէ Աժդահակայ, Մարաց եղելոյ թագաւորի, որ այժմ Մուրացեանղ կոչեն։ Քանզի ոչ ասեն նահապետաց ազգին՝ Մուրացեան տէր, այլ Մարաւոցն տէր» (II, 8)։ Մուրացեանի՝ Մարացեանով ստուգաբանությունը լրացվում է Աժդահակ—վիշապ նույնացմամբ։ «Զի Աժդահակդ,—գրում է Խորենացին,—ի մեր լեզու է վիշապ»։ Ուստի և սրանց հաջորդում են Արտաշես Միջինի ժամանակ տեղի ունեցած դրվագները՝ հայոց թագուհի Սաթինիկի սերը Մուրացեան-Վիշապազուն Արգամ-Արադաւանի նկատմամբ, Արտաշեսի դեմ վերջինիս լարած գավերը, որոնք ավարտվում են Մուրացեան տոհմի բնաջնջմամբ Արտաշեսի որդի Արտավազդի ձեռքով (II, 51)։

Վերջապես, Խորենացու մոտ հանդես եկող Աշխադարեան տոհմանունը (որն Ադոնցը իրավացիորեն նույնացնում է Գահնամակում աղավաղված Աշահմարեան ձևով հանդես եկող տոհմանվան հետ) Պատմահայրը կապում է Տրդատ թագավորի հարսնացու ապա և թագուհի Աշխենի և նրա հայր Աշխադարի հետ (III, 83)։

Մի խոսքով, այս վեց տոհմանուններից յուրաքանչյուրի ստուգաբանությունը Խորենացին որպես աղբյուր է ծառայեցրել իր պատմության համար, և այս է եղել մեր կարծիքով, նշված նախարարությունների ներգրավման հիմքը կամ հիմքերից մեկը։ Պատմահոր աչքում սրանց ունեցած արժեքը շեշտելու համար նշենք, որ նրա հիշատակած 50 տոհմանուններից 20-ը նա չի ստուգաբանել, իսկ մնացած 30-ից շուրջ 10-ը շատ պարզ ստուգաբանություն ունեն, մեր վերը նշած իմաստով քիչ արդյունավետ. դրանք սոսկ պարզում են տոհմանվան հիմքում ընկած անձնանունը՝ Աբեղեան՝ Աբել, Խոռոռունի՝ Խոռ, Գաբեղեան՝ Գաբաղ, Բզնունական՝ Բաղ և այլն։ Այսպիսով, մեր շոշափած տոհմանունների արժեքը բավական բարձր պիտի եղած լինի Խորենացու աչքում։ Ավելացնենք, որ Խորենացու ստուգաբանությունները համակարգի տեսքով դիտելիս, ինչպես որ ծրագրել ենք, ասվածը ավելի համոզիչ ձևով է ներկայանում։

Մեր ուշադրությունը հիմնականում նվիրելով Գահնամակի և Խորենացու համար ընդհանուր 36 տոհմանուններին, այսուհանդերձ, չպիտի մոռանանք, որ Խորենացու ցանկում կա ևս 14 այնպիսի տոհմանուն, որոնք Գահնամակում բացակայում են։ Եվ ահա, հարց է ծագում, թե որտեղից է դրանք առել Խորենացին, եթե ոչ Գահնամակից։ Դրանցից 10-ը առկա են Զորանամակում, բայց մենք արդեն եկանք այն եզրակացության, որ Խորենացին է ծառայել որպես աղբյուր Զորանամակի հեղինակի համար և ոչ՝ հակառակը։

Բերում ենք այդ 14 տոհմանունները, աջ կողմից նշելով, նախորդ աղյուսակի օրինակով, այդ տոհմանունները հիշատակող V դարի աղբյուրները։

	Մարդպետական	—	Ա	Բ	Ղ	—
	Կորդուաց	—	Ա	Բ	—	—
	Աղձնիքի	—	Ա	Բ	—	—
	Անգեղեայ	—	Ա	Բ	—	—
5.	Գուգարացի	Կ	—	Բ	—	—
	Գարդարացի	—	Ա	—	—	—
	Նավդէացի	—	Ա	—	—	—
	Ուտէացի	—	Ա	—	—	—
	Որդունի	—	—	Բ	—	—

10. Բզնունի	—	—	Բ	—	—
Մանաւազեան	—	—	Բ	—	—
Տաշրացի	Կ	—	—	Ղ	Ե
Կաղմեան	—	—	—	—	—
14. Առանի	—	—	—	—	—

Աղյուսակը ցույց է տալիս, որ Գահնամակում հիշատակված այս 14 նախարարությունների արժորոշումը V դարի աղբյուրներում նույնանման պատկեր է ցուցաբերում, ինչպիսինը տեսանք 36 հիշատակվածների խնդրում։ Ուրեմն, այստեղ դեռ ավելի մեծ հիմքեր կան հենվելու այդ արժորոշման վարկածի վրա։ Գահնամակից փոխառված չլինելով, ուստի և դուրս մնալով Ադոնցի առաջարկած բանաձևերի գործողության ոլորտից, նրանք պիտի մուտք գործեին Խորենացու Պատմությունը հենց իրենց արժորոշման շնորհիվ։

V դարի աղբյուրներում չեն հիշատակված այս 14-ից 2-ը միայն, որը կազմում է 14 տոկոս և համընթաց է 36-ի և 6-ի հարաբերությանը՝ 16,5 տոկոսին։ Եթե դառնանք, ինչպես այդ 6-ի դեպքում էր, այս 2-ի՝ Խորենացու մոտ առկայության բացատրությանը, ապա պիտի հիշատակենք, որ Կազմյան տոհմի մասին տեղեկությունները նա ստացել է Մար Աբաս Կատինայի մատյանից, որը անվանելով վերջինիս Մարաբայ Մծուրնացի, նույն իմաստով օգտագործել է նաև Սեբեոսի «Պատմությանը» կցված «Նախնական պատմության» Անանուն հեղինակը։ Գալով Առանյաններին, ապա նրանք, ինչպես ասվեց սկզբում, հիշատակված են Սեբեոսի բուն պատմության մեջ, VII դարում, որ նշանակում է, թե նրանք գոյություն են ունեցել V դարում ևս։

Եվ այսպես, Մովսես Խորենացին, ունենալով իր աչքի առաջ և օգտագործելով Գահնամակի նման մի ցանկ, որը, ըստ Ն. Ադոնցի խոսքի, «մեղ համար ունի գրեթե պաշտոնական վավերագրի նշանակություն», ոչ բավարարվել է նրանով, և ոչ էլ կուրորեն հետևել նրան։ Իր պատմության համար նախարարական տոհմերի կազմը նա ձևավորել է, օգտվելով, բացի Գահնամակից, նաև անցյալը լուսաբանող մատյաններից (Մար Աբասի, Ողյումպ քրմի և այլն), իսկ հիմնականում իր ապրած V դարում գործող նախարարություններին վերաբերող իրեն մատչելի բոլոր տեսակի աղբյուրներից, այսինքն, ոչ միայն կարդացածից, այլև տեսածից, լսածից, տեղեկացածից։ Անշուշտ, նրանից չէր կարող վրիպել և նախարարության հետ կապված այնպիսի մի ինաղավառ, ինչպիսին էր տոհմերի համեմատական հզորությունը և առաջին հերթին՝ որա առավել կարևոր և շոշափելի ցուցանիշը՝ յուրաքանչյուրի ունեցած կամ մատուցած զորքի քանակությունը։ Նա ունեցած կլինի նաև Զորանամակի նման թվերով օժտված մի գրություն կամ գրություններ, որոնք ևս օգնել են նրան նախարարական տների ընտրության գործում։

Ի դեպ, ժամանակակցի դիրքը մի հատկանիշ է Պատմահոր նկարագրի մեջ, որն ինքն է շեշտում իր վերջին, 3-րդ գրքում, որն ընդգրկում է շուրջ 110 տարվա պատմություն, հասցնելով մինչև իր ապրած ժամանակը։ Ի տարբերություն 1-ին և 2-րդ գրքերի, որոնք լի են գրավոր աղբյուրների հղումներով (յուրաքանչյուրում մի քանի տասնյակ), այստեղ նա և ոչ մի գրավոր աղբյուր չի հիշատակում, որը հատկանշական է իր կամ իր անմիջական նախորդների տեսածն ու լսածը վերապատմողի համար։ Այս տեսակետից հետաքրքրական է, որ Խորենացին հստակորեն առանձնացնում է այս դիրքը

նաև իր այստեղ կիրառած լեզվի առումով, ասելով, թե գրում է այն, ի տարբերություն նախորդ երկու գրքերի, «հասարակաց լեզուով անցանելով զպատմութիւնս» (III, 1), այսինքն՝ ժամանակի խոսակցական լեզվով։

Արդ, նախարարական տների տարբեր ուղիներով Խորենացու իրականացրած ընտրության որպես արդյունք ձևավորվել է պատահականություններից հեռու մի կազմ, որը, փոքր բացառություններով (որոնք, անշուշտ, իրենց հիմքը կունենան), բաղկացած է թե՛ (իր պատկերացմամբ) հին դարերում և թե՛ (արդեն փաստացիորեն) իրեն նախորդած IV և իրեն ժամանակակից V դարերում երկրի կյանքում էական դեր խաղացած տոհմերից։ Սրանք նրա պատմության մեջ հանդես են գալիս խիստ դինամիկ, փոխկապակցված, և մանավանդ՝ սերտորեն կապված թագավորական տոհմի ու նրա ունեցած իշխանության դրսևորումների հետ, ու նրանց շարժումը սկզբից մինչև վերջ ներկայացնում է մի կուռ համակարգ՝ մեկը Խորենացու «Հայոց պատմություն» կազմող համակարգերից։

СПИСОК НАХАРАРСКИХ РОДОВ У МОВСЕСА ХОРЕНАЦИ

Академик НАН РА Г. Х. САРКИСЯН

Резюме

В «Истории Армении» Мовсеса Хоренаци действуют 50 нахараркских родов. Так как число таких родов по другим источникам существенно больше, то возникает вопрос о критериях их отбора историком. Н. Адонц показал, что основным источником для Хоренаци послужил Гахнамак—разрядная грамота с перечнем 70 нахараркских родов, которую он датирует VII в. Соглашаясь с Н. Адонцем в части источника, мы, однако, полагаем, что Гахнамак обладает всеми признаками памятника V в. В качестве источника для Хоренаци Н. Адонц привлекает и т. н. Зоранамак—воинскую грамоту, датируемую им также VII в., откуда, по его мнению, историк получил данные о численности воинов каждого из нахараркских родов, которые и применил в качестве критерия отбора. Полагаем, что трудно было бы приписать Мовсесу Хоренаци столь механический подход в этом важнейшем для него вопросе, тем более, что предложение Н. Адонца натыкается также на множество фактических препятствий. Критерием отбора из Гахнамака 36 родов, а также—уже из других источников—отсутствующих в нем 14 родов, по нашему мнению, для Мовсеса Хоренаци послужило подобие рейтинга, выражаясь современным термином. А именно, частота и весомость их упоминания в трудах авторов V в. и более ранних, в других писаниях этого времени, в том числе и содержащих, скажем, данные о численности воинства, далее, его собственные впечатления как современника от того, что он видел, слышал, до чего допытывался и т. п. Таблицы, приведенные в статье, подтверждают это мнение.

THE LIST OF NAKHARAR FAMILIES OF MOVSES KHORENATSI

Academician of the NAS of the RA G. Kh. SARKISSIAN

Summary

In the „History of Armenia" Movses Khorenatsi narrates of 50 Nakharar families. Since the number of such families in other sources is exceedingly higher, the question arises as to the criterion of their selection by the historian. N. Adonts has

shown that the main source for Khorenatsi was Gahnamak, the category deed listing 70 Nakharar families. He dates Gahnamak to VII A. D. We agree with Adonts as to the source of the historian but not as to dating. Gahnamak has all the features of the document of the fifth century. Adonts discussed the so-called Zoranamak dated by him also to VII A. D. He argues that it is from here that Khorenatsi took the number of warriors in each Nakharar family and they are these numbers that he employed in selecting the families from Gahnamak. In fact the criterion for selecting 36 families from Gahnamak, as well as 14 families from other sources not attested in Gahnamak, appears to be the result of some sort of modern rating. We believe the selection was based on the combination of the historian's impressions, facts he gathered, the frequency and weight given to the families mentioned in the works of the fifth century, their treatment by earlier authors, as well as other works at the time, in particular containing information on the number of warriors. The tables brought in the article proved this view.